ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(2019թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար)

❖ *ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի իրավաբանական բաժինը հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ապահովել է ՀՀ օրենսդրությամբ Մարզպետին և Գլխավոր քարտուղարին վերապահված լիազորությունների օրինականությունը, ուսումնասիրվել է Մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմված Մարզպետի և Գլխավոր քարտուղարի ընդունած իրավական ակտերի՝ որոշումների, կարգադրությունների և հրամանների նախագծերի համապատասխանությունը ՀՀ գործող օրենսդրությանը.*

❖ *Ուսումնասիրվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի օրինականությունը և ծագած խնդիրների լուծման վերաբերյալ Մարզպետին է ներկայացվել համապատասխան առաջարկություններ.*

❖ *Նշված ժամանակահատվածում մարզի ավագանիների կողմից ընդունվել է 758 որոշում, որոնք հիմնականում վերաբերվել են համայնքների բյուջեների ընդունմանը, դրանցում կատարված գումարային և հոդվածային վերաբաշխումներին, համայնքի ղեկավարի աշխատակազմի թվաքանակի, հաստիքացուցակի, դրույքաչափերի հաստատմանը, համայնքի սեփականություն հանդիսացող հողերի օտարմանը համաձայնություն տալուն, հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելուն և ներհամայնքային այլ խնդիրների: Անհամապատասխանությունների և թերությունների հայտնաբերման դեպքում որոշումները վերադարձվել են համապատասխան ուղղումների, որոնք սահմանված կարգով ուղղվել և վերադարձվել են մարզպետարան:*

❖ *Մարզի 4՝ Ջերմուկ, Եղեգնաձոր, Արենի և Գլաձոր համայնքների ավագանիներն ընդունել են իրենց համայնքներում մետաղական հանքարդյունաբերությունն արգելելու և համայնքը էկո-տնտեսական տարածք ճանաչելու վերաբերյալ որոշումներ, որոնք անվավեր ճանաչելու պահանջով ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը դիմել է ՀՀ վարչական դատարան: Արենի և Գլաձոր համայնքների ավագանիների որոշումներն անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ հայցադիմումները դատարանն ընդունել է վարույթ, Եղեգնաձոր և Ջերմուկ համայնքների ավագանիների որոշումների դեմ ներկայացված հայցադիմումները վերադարձվել էին: Վերջիններս վերադարձնելու մասին ՀՀ վարչական դատարանի մասին որոշումները բողոքարկվել են վերաքննիչ վարչական դատարան:*

❖ *Ուսումնասիրվել են քաղաքացիների դիմումները, բողոքները և առաջարկությունները, ձեռնարկվել համապատասխան միջոցառումներ և առաջարկություններ են ներկայացվել Մարզպետին. Հաշվետու ժամանակահատվածում պատասխանվել է մարզի տարբեր համայնքների քսանյոթ քաղաքացու դիմումի, որոնցում բարձրացված հարցերը վերաբերվում էին անշարժ գույքի նկատմամբ սեփականության*

իրավունքի գրանցման հետ կապված վեճին և բնակարանի վթարայնության հետ կապված խնդիրների, գույքին պատճառված վնասի փոխհատուցմանը, հարևանային, նախապատվության իրավունքի հետ կապված վեճերի և նման այլ հարցերի: Դիմումներին պատասխանվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներից ելնելով, մի մասին տրվել է հարցերը լուծող սպառիչ պատասխան, իսկ մարզպետարանի իրավասության շրջանակներից դուրս գտնվող հարցերի վերաբերյալ դիմումատուներին բացատրվել է գործող կարգը և ցույց է տրվել համապատասխան ուղղություն:

❖ *Իրականացվել է քաղաքացիների և պաշտոնատար անձանց ընդունելություն, տրամադրվել անհրաժեշտ իրավաբանական խորհրդատվություն և համապատասխան տեղեկատվություն ինչպես քաղաքացիների, այնպես էլ համայնքապետարանների աշխատակազմերի աշխատակիցների: Ամենօրյա աշխատանքային կարգով խորհրդատվություն, մեթոդական ցուցումներ են տրամադրվում համայնքապետարանների աշխատակիցներին (հիմնականում աշխատակազմի քարտուղարներին):*

❖ *Մարզպետարանի ստորաբաժանումների աշխատակիցներին տրվել են պարզաբանումներ՝ ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի, ինչպես նաև դրանցում կատարված փոփոխությունների ու լրացումների վերաբերյալ, տրամադրվել են մեթոդական ցուցումներ.*

❖ *Իրավական և մասնագիտական հսկողության շրջանակում իրականացվել է հսկողություն Գլաձորի, Եղեգիսի և Արենիի համայնքապետարաններում, հայտնաբերված թերությունների վերաբերյալ տրվել է մեթոդական օգնություն, անհրաժեշտ տեղեկատվություն է ներկայացվել Մարզպետին:*

❖ *Ուսումնասիրվել են Բաժնին հասցեագրված նամակները, գրությունները, հանձնարարականները, քննարկվել և օրենքով սահմանված ժամկետում ապահովվել է դրանց լուծումը.*

❖ *ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն առաջարկություններ են ներկայացվել ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքում, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում առկա անհամապատասխանությունների վերաբերյալ: Առաջարկություններն ընդունվել են, հարցերը ներառվել են ՀՀ ազգային ժողովի յոթերորդ գումարման երրորդ նստաշրջանի օրակարգում:*

❖ *ՀՀ կրթության տեսչական մարմնի կողմից «Շատինի միջնակարգ դպրոց» և «Վարդահովիտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ներում իրականացված ուսումնասիրության արդյունքում արձանագրված խախտումների հիման վրա բաժնի կողմից հարուցված կարգապահական վարույթի արդյունքում տույժեր են կիրառվել դպրոցների տնօրենների նկատմամբ:*

❖ *Համագործակցել ենք հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:*

❖ *Նախապատրաստվել են Բաժնի գործունեության հետ առնչվող գրություններ, զեկուցագրեր, հաշվետվություններ, տեղեկատվություն, եզրակացություններ և ներկայացվել համապատասխան մարմիններին.*

❖ *Ամենամսյա տեղեկատվություն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ մարզի համայքների ավագանիների կողմից ընդունված որոշումների վերաբերյալ:*

❖ *Մարզի համայնքների ավագանիների որոշումները տեղադրվել են ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքում:*

❖ *Պատասխանվել են տարբեր պետական մարմինների, փաստաբանների և այլ կազմակերպությունների կողմից ստացված գրություններին, ընթացիկ գրություններին:*

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ն. ՄԱՂԱՔՅԱՆ

10.01.2020թ.